եանների տիրապետութեան շրջանում, ձորերի, վիճակների տոհմական իշխանութիւնը մայրերի ձեռքն է եղել, փաստեր կան, դրաւոր փաստաթղթեր 1578—1839 տարիների թանգիմաթը Արդանուչի, Խալխալի, Խախի, Մաճիխելի, Ոլորի կին վարչապետները Օսմանեան սուլթաններից հաստատուած ինքնավար հասարակութիւններ են կազմել:

Ճորոխի Աւազանի անտառներում կաղնուց, կաղամախից, ընկուզից, տօսախից եւ ուրիշ ամրկենի փայտերից շինուած տնական կարասիները՝ տեփուր, սեղան (խոնչա), տաշտ, շերեփ, գդալ, սանդ ցոյց են տալիս, որ այս երկիրը իր ինքնուրոյն զարգացումն ունեցել է եւ հասել է որոշ բարձրութեան: Իւրաքանչիւր առարկայի ձեւը, քանդակները, ծաւալը եւ մանաւանդ նիւթը յատուկ է միայն այս երկրին. չեն կարող նմանեցնել ուրիշ նահանգներում եւ տարածուած է հայկական 15 նահանգներում:

Ճորոխն ունի իր յատուկ ձեւով նաւակներ—կայեկ, որոնք անձնատուր են լինում գետին եւ նաւապետները վարում են բիրերով (երկար ձողերով): Գետով բարձրացնում են նաւակները ո՛չ թէ թիավարելով, այլ նաւաստիները չուաններով լծւում եւ ափից առաջ գնալով՝ քաշում են նաւակը, նաւապետը բիրը հպեցրած նաւակի քթին